



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 15

ՇԱԲԱԹ

8 ԱՊՐԻԼ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՆԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԵ՝ քե՛հ. Պոլիս, եւ քե՛հ՝ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Մանօք. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

(آ. آصادوریان) شرکت مرتبه مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասկի քիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ նեղ
փափկամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
ևւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւագործուածը,
հաստատունը ևւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :
Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍԱՐ | Չարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշդեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզդուլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԵՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Իրաւագրուի եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ՃԻԻՂ

Իրաւագրուի եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեանս գրամատուեն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11 — 16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիւսգոր ներկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 15

ԾԱԲԱԹ

8 ԱՊՐԵԼ 1906

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ ՄԸ

Թերթերէն ոմանք անցեալները գրեցին թէ՝ Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդն ալ Չլդատեան վարդապետին ինչ ինչ գայթակղալից արարքներուն վրայ բողոք բարձել կամ տեղեկագիր ղրկել է Պատրիարքարան :

Վարդապետին հաշուոյն Կ. Պոլսոյ մէջ արձանագրուած գայթակղութեան պարագաները մեզի չիյնար քննել և լուսաբանել :

Բայց կէտ մը կայ, զոր անկողմնակալութիւնը պարտք կը դնէ քննել և լուսաբանել :

Իրաւ է թէ Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդը բողոք բարձած է Չլդատեան վարդապետին դէմ : Ասիկա բոլորովին տարբեր կէտ մըն է, տարբեր խնդիր մըն է, զոր պէտք չէ չփոթել այդ վարդապետին ուրիշ ոեւ է արարքին հետ :

Արդ, Աղեքսանդրիոյ Թաղ. Խոր-

հուրդին դիւանապետ և Բարթող փաշայի քարտուղար Միհրան էֆ. Թէլեան յատուկ գրութեամբ իմացուցած է թէ այդպիսի գիր մը երբեք Աղեքսանդրիայէն յղուած չէ Պատրիարքարան, և մանաւանդ թէ Թերթերուն ծանուցած զրոյցը Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդին կողմէ պաշտօնապէս հերքուած է, և Չլդատեան վարդապետին եզրկատոսի մէջ թողած նպաստաւոր ազդեցութեան մասին գովեստ կարգացուած է :

Թէլեան Միհրան էֆ. կը գրէ. — Սրտի անհուն ցաւով մը կարգացինք Թերթերուն մէջ ձեր անուան շուրջ երեւցող անարգալի գրութիւնները ի մասին Աղեքսանդրիոյ մէջ անգթօրէն ձեզի վերագրուած ենթադրական արարքներուն : Ձեր երկարատեւ ճամբորդութենէն վերջ երբ Աղեքսանդրիա կը վերագառնայիք, անողորմ բախտը

անգամ մ'ալ կը հարուածէր զՁեզ՝ խլելով ձեզմէ ընտանեկան յարկիդ վերջին շառաւիղն, սակայն դուք, Պատ. Հայր, սրտի կատարեալ արիւթթեամբ և երկնային կենաց հոգեպարար, հոգենորոգ հաւատքի կենդանացուցիչ ցօղերովն գօտեպնդեալ՝ յետին ողջոյնդ և օրհնութիւնդ տալով հաւատացեալ ժողովուրդին — Պօղոս Պետրոս եկեղեցիի մէջ — Ս. Խաչի օրը կը հեռանայիր հոսկէ, տանելով ձեր հետ մեր ամէնուս արգահատանքն ու համակրանքը :

« Յաւ ու զարմանք պատճառեց մեզ թերթերուն այն դրութիւնը, որով կ'ըսուէր թէ « Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդն ալ պաշտօնական գրութիւն մը յղած է Պատրիարքարան, որով հաստատած է Չլղատեան վարդապետի նկատմամբ վերջերս գրուածները », աւելցնելով. « Աղեքսանդրիոյ մէջ ևս Չլղատեան վարդապետ բարի վարուց հակառակ ընթացքի մէջ գտնուած է » :

« Բոլորովին սուտ և բացարձակաբար զրպարտութիւն է. Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդը ո՛չ հաւաքաբար և ո՛չ ալ անհատապէս այդպիսի գրութիւն մը չէ յղած Պատրիարքարան, և մենք կըսպասէինք որ Պատրիարքարանէն հերքում տրուի և երեւան հանուի — եթէ ճիշդ է — ա՛յն անխիղճը՝ որ յանուն Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհրդոյ այդպիսի նպատակաւոր սուտ և զրպարտիչ գրութիւն մը յղած է Պատրիարքարան : Չեր տրդար իրաւունքն է, դիմեցէք առ որ անկ է և հերքումը պահանջեցէք » :

Արդ, Բարթող Փաշայի կողմէ իր դիւանապետին այս գրութիւնը իրաւցընէ բացարձակ հերքումն է Աղեք-


սանդրիոյ Թաղ. Խորհուրդի անունով յերկրուած լուրերու Չլղատեան վարդապետին նկատմամբ : Նամակի մը մէջ այսքան համակրալից արտայայտութեան առարկայ եղող կղերական մը չի կրնար իր հասցէին ուղղուած արարքներուն մէջ ինկած ըլլալ, զորս ինքնակոչ թղթակից մը ուղեր է առիթ օգտուելով հրապարակ նետել :

Ոչ նուազ զարմանալի է նաև որ Պատրիարքարանը չփութաց այդ հերքումը տալ Բարոյականի ուրիշ քննելի արարքի մը եզրակացութիւնը ի՛նչ որ ալ եղած ըլլայ կամ պիտի ըլլայ, արգարութիւնը պարտք կը դնէ մեր վերայ որ ձրի զրպարտութեանց բռնան տակ չընկճուի Չլղատեան վարդապետ : Եթէ անբասիր եղած է իր կեանքը Աղեքսանդրիոյ մէջ, ինչպէս յայտնի կ'երեւայ վերոյիշեալ պաշտօնագրէն, խղճի հակառակ է ենթադրական արարքներու տարակոյսի տակ թողուլ վարդապետը : Այսքան տաք վերաբերում մը իր անձին նկատմամբ Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդին կողմէ՛ ինքնին բացարձակ արդարացումն է Չլղատեան վարդապետի՝ անգոյ թըղթակցի մը չարակամութենէն : Կղերականի մը պատիւը մինչեւ մէկ աստիճան իր պատկանած հասարակութեան պատիւն է, անոր հետ խաղալը — երբ առանց ապացոյցի է — խղճի օրէնքներու համաձայն չէ : Ո՛չ մէկ կերպով կարելի է երկբայութեան մէջ դնել Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհրդոյ դիւանապետին այս գրութիւնը, որ պայծառ կերպով կը պատկերացնէ վարդապետին անմեղութիւնը՝ Աղեքսանդրիոյ մէջ :

Արդէն իսկ Չլղատեանի վարդապետու-

Թեան աստիճանին կոչուելուն առթիւ Բարթող փաշայի կնքհայրութիւնը և նուիրատուութիւնը ո՛չ նուազ զօրաւոր ապացոյց մըն է թէ արդարեւ հիմնապէս պէտք էր որ երեւակայական ըլլար իբր թէ Աղեքսանդրիայէն ծանուցուած այդ յերիւրանքը : Ինչպէս կարելի է վայրկեան մը իսկ ենթադրել թէ Բարթող փաշայի նման եկեղեցասէր անձնաւորութիւն մը թողունք կնքհայր ըլլար՝ այլ նոյն իսկ պարզ համակրող մը ա՛յնպիսի եկեղեցականի մը, որ Աղեքսանդրիոյ մէջ ատանկ կենցաղ մը ունեցած ըլլայ : Այնպէս որ այս նամակին գոյութենէն իսկ առաջ դիւրին էր կռահել թէ Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդը մեծ համակրանք կը տածէր Չղատեանի նըկատմամբ, որ անսահման վստահութիւնը կը վայելէր նոյն Թաղ. Խորհրդոյ Վսեմ. Ասենապետին :

Այս պատճառաւ, և արդար ըլլալով համար պէտք է սրբագրել այս կարեւոր Վրիպակը : Չեղած տեղը անբարի վարուց մուր քսելը թէ՛ բանականութեան հակառակ է և թէ բարեխրղճութեան :



Չ Ե Կ Ո Յ Ց

«Հանրագիտակ»-ի անցեալ շաբթուան թիւին մէջ երեւցած Պէնկի Թաղիդա ստորագրութեամբ յօդուածին մէջ յիշուած քեղալ Որդիկ եւ Առաքել անունները ո՛րք է անձի հետ առնչութիւն մը չունենալով՝ և պարզապէս իբր անուն դրուած ըլլալուն, խմբագրութիւնս հարկ դատեց ի գիտութիւն ներկայ զեկոյցը հրատարակել :

ՊՈԼՍՈՑ ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՀԱՅ-ԼԵՂՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Մեր կրթական յարկերուն տակ, Հայ. Լեզուն դասախօսող ուսուցչաց Ա. դասակարգը ներկայացնելէ վերջ, այսօր պիտի խօսինք այդ լեզուն աւանդող մնացեալ ուսուցիչներուն վրայ, ամբողջացնելու համար մեր վարժարաններուն մէջ Հայ. Լեզուն դասախօսող ուսուցչաց թիւը :

ԲԱՊՈՒՃՃԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ, Հայ. Լեզուի կարող ուսուցիչ մը, որ Փանոսեան վարժարանի մէջ աշակերտած է՝ Ուսուցչապետ Ռէթէոս Էփէնտի Պէրպէրեանի, ուրկէ սորված է միմիայն հայ. գրաբարը ու գրականութիւն :

Բապուճճեան՝ սահմանափակ ուսուցչական կեանք մը ունեցած է, ու իր դասաւանդութեան եղանակը կարծես աւելի հին դպրոցի ուսուցիչները կը յիշենէ :

Թէեւ ինք աւելի զարգանալու փափաք մը չէ ունեցած, սակայն ապրած է միշտ գոհ իր կեանքէն, ինք կատակաբան ուսուցիչ մը եղած է եւ երկար ատեն դասախօսած Օրթագիւղի դպրոցը, այժմ Բապուճճեան հայ. Լեզուն կը դասախօսէ Կէտիկ լաւ շայի դպրոցին մէջ :

ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ, որդին է Սամաթիացի անուանի Կարապետ հօճայի, հմուտ է հայերէնի եւ ունի բաւական ծանօթութիւն Օսմ. ու Գաղ. լեզուաց, ինք աւելի դաստիարակ ուսուցչի պաշտօններ վարած է Պոլսոյ զանազան վարժարաններու մէջ, իր դասախօսութեան եղանակը աւելի հին դպրոցի ուսուցչաց կը վերաբերի : Թէեւ Փէշտիմալճեան դասի ատեն քիչ մը բարկացող է եւ խոժոռաղէմ, բայց յաճախ իր դասերը կը համեմէ անեկթոտներով ու կատակաբանութիւններով :

Սկիւտարի ձեմարանին մէջ ընդհանուր հսկողի պաշտօնը վարած է բաւական երկար ատեն, այժմ աւագ ուսուցիչն է Օրթագիւղի դպրոցին :

Փէշտիմալճեան, Աբրահամ Այվազեանի հետ մէկտեղ խմբագրական կեանք մ'աւ ունեցած է, եւ ունի բաւական զաւեշտական գրուածքներ, Ես ու Գ. ստորագրութեամբ:

Փէշտիմալճեան մինչեւ այսօր կ'աշխատակցի «Փունջ» շաբաթաթերթին, հրատարակած ունի տարեցոյցի ձեւով պզտիկ գրքոյկ մը, որ պատրաստուած է աւելի ընթերցողը խնդացնելու համար:

Ունինք նաեւ հայ. լեզուն աւանդող երեք սրատուելիներ, եւ որոնք՝ իրօք պատուելի (hororalle) մարդիկ են:

Յիշենք ատոնցմէ պատուելի Թադէոսեան Ռէթէոսը, որ գրեթէ քառասուն տարի է ի վեր դեգերած է Ոսկեղջուրի կողմերը, ու ուխտած է կարծես հո՛ն միայն, Խասգիւղի մէջ սպառել իր շունչը, որովհետեւ այդ տեղի ուսանողներուն ու որբերուն համար միայն իր ուսուցչի գրիչը շարժած է ու իր աչքերուն լոյսը փախցուցած: Ի՞նչ կարելի է ըսել պատուելի Թադէոսեանի կեանքին վրայ, եթէ ոչ՝ ներքող մը անոր վաղածանօթ անուան ու յարգանք անոր վաստակաբեկ պատուելի պաշտօնին:

Ինք միշտ աշխատասէր, պարկեշտ ուսուցիչ մ'եղած ու սիրուած շատերէն, բաւական հմտութիւն ունի բացի հայերէնէ՝ պատմութեան Պեւ աշխարհագրութեան, ինչպէս նաեւ ընդհանուր զարգացում մը:

Ոսկեղջիւրէն՝ Վոսփոր անցնելով կը հանդիպինք ուրիշ ո՛չ նուազ արդիւնաւոր պատուելի մը, Խանճեան Սահակին, որ հանդարտ ու միօրինակ կեանքով մը, կը դասախօսէ մինչեւ այսօր Պէօյիքատէրէի ու Սարեարի դպրոցներուն մէջ:

Խանճեան Սահակ պատուելի մասնաւորապէս հմուտ է հայ. գրաբարի մէջ, ասկէ քանի մը տարիներ առաջ էրգրումի Սանասարեան երկրորդական վարժարանին տնօրէնը մասնաւորապէս Պոլիս եկած պատուելի Խանճեանը իրեն դպրոցին հայ. աւագ ուսուցիչը կարգելու համար:

Պատուաբեր պաշտօն մը, զոր մերժեց պատուելի Խանճեան, նկատի առնելով իր

ընտանեկան վիճակը, որ չէր թոյլադրեր պատուելիին բացակայումը:

Պատուելի Խանճեան հմուտ է նաեւ կըրօնական գիտելիքներու, ու հրատարակած է «քրիստոնէական» մը, թէեւ պատրաստուած դպրոցական ուսանողներու համար, սակայն մենք տեսած չենք անոր գործածուիլը մեր դպրոցներուն մէջ:

Եւ իրօք ալ, ըստ մեզ, այս քրիստոնէական գիրքերը պէտք չէ որ գործածուին մեր դպրոցներուն մէջ:

Կրօնագիտութեան դասը՝ որ մեր մատաղ սերունդին բարոյական կրթութիւնը կազմելու ձգտող դասերէն մէկն է, ցաւալի է որ այսօր անոր, մեր վարժարաններուն մէջ աւանդուած եղանակը, բոլորովին հակառակ ազդեցութիւն մը կը ներգործէ մեր երկսեռ ուսանող սերունդին վրայ, որովհետեւ, իր այն եղանակովը զոր այսօր կաւանդուի կրօնի դասը մեր ազգ. բոլոր վարժարաններուն մէջ, միշտ նպաստած է զանոնք՝ ուսանողները Կրօնքի անտարբեր ընելու:

Անցածները հազիւ տասը տարեկան օրիորդի մը ձեւք՝ կրօնքի գիրք մը տեսայ, որուն մէջ սապէս հարցումներ մը կային, «Աստուած ո՞ւր է», «Ի՞նչ է անարատ յղութիւնը», «Աստուածային անձինք իրարմէ կը զանազանի՞ն», «Ի՞նչ է երրորդութիւնը» եւլն. անշուշտ ուսանողները ստիպուած ստանաւորի մը պէս գոց կը սորվին, յաճախ իրենց տեսածը իրենք ալ չի հասկընալով, ու մի եւ նոյն ատեն տարակուսանք մը արթնցնելով իրենց մտքին մէջ կրօնքին նկատմամբ: Այդ արտաւուրդ հարցումները, որոնցմով պատրաստուած է, ո՛չ միայն պատուելի Խանճեանին «քրիստոնէական» ըսյլ մեր միւս հեղինակներուն կրօնի գիրքերն ալ ո եւ է օգտակարութիւն մը չունին:

Աւելի լաւ բան մը ըրած չպիտի ըլլանք արդեօք, երբ մէկդի ձգենք այդ կրօնքի անխնամ կերպով գրուած գիրքերը, ու ատոնց տեղ Աւետարան կարդանք մեր ուսանողներուն, բացատրենք ատոր էջերը մեր աշակերտներուն առջեւ. մեր կրօնքը միզէ՞ Աւետարանին մէջ պարփակուած չէ՞:

կրօնի ուսուցիչը պէտք է կրօնը ցուցունէ անոր հիմնադրին կեանքին մէջ: Այլ ինչ խարխաբիլ մթութեան մէջ՝ բացատրելու, փաստարանելու համար անըմբռնելի համարուած խնդիրներ:

Եւ որքա՞ն ծաղրելի կ'ըլլայ յաճախ, երբ անձամբ թերահաւատներ կերթան հաւատաւորի պաշտօնը կատարել մեր դերահաս ուսանողներուն առջեւ, մինչդեռ չատ դիւրին է Աւետարանը կարդալ ու բացատրել մեր ուսանողներուն:

Ահա՛ ինչ որ կ'ըմբռնեմ կրօնի դասըսելով:

Հայ. լեզուն աւանդող երրորդ պատուելին կը կոչուի՝ Պատմաճեան Գրիգոր, որ իր ուսումը Սկիւտարի ձեմարանին մէջ առնելէ վերջ կը կոչուի Պոյաճի-գիւղի վարժարանին տեսչութեան:

Նշանակելի է իր մուտքը տեսչական այս փափուկ պաշտօնին, մտիկ ըրէ՞ք նոյն ինքն Պատմաճեանն է խօսողը:

Կեանքիս է՛ն նշանակելի օրն էր նոյն օրը, յորում եկան աւետել ինձ թէ՛ կոչուած եմ Պոյաճի-գիւղի վարժարանին տեսչութեան փափուկ պաշտօնին, ուրախութիւնս չափ չունէր, որովհետեւ անիկա իմ առաջին պաշտօնս պիտի ըլլար, պաշտօն մը պատուաբեր, պաշտօն մը՝ յաւէտ ցանկալի, մտադրեցի մեծ եռանդով մը սկսիլ՝ աշխատիլ, հրապարակի վրայ անուն մը չի նշու համար, որոշեալ օրը եկած էր, մուտքի ճառ մը պատրաստած էի խօսելու համար այդ վարժարանին բազմաթիւ երկսեռ ուսանողներուն առջեւ, գրպանս դրի զայն ու ներկայացայ թաղ. Խորհրդին, որ յանձնարարեց իր քարտուղարին զիս վարժարան տանիլ: Սակայն, աւա՛ղ, մեծ եղաւ յուսախաբութիւնս, երբ ԵՐԿՈՒ ուսանողներ միայն ինծի ներկայացուցին, որոնց վրայ տեսուչ էի կարգուած ...:

Նախկին ուսուցիչը Թաղ. Խորհրդոյ հետ գփտելով դպրոցին տղաքը իր տունը հաւաքած է եղբեր:

Հինգ տարիներ վարեցի սակայն այս փափուկ պաշտօնը, եւ յետոյ հայ. լեզուի ուսուցիչ կարգուեցայ Սկիւտարի Ս. Խաչին,

որուն այն ատենուան հսկողն էր Փաշաեան Տէր Տաճատը, իր Տիգրան եղած միջոցին, հոս ալ զարմանալի բան մը պատահեցաւ, զի առաջ տաք վերաբերում մը չունեցաւ ինծի հետ, ու կը զլանար իր ընկերներուն հետ, ինծի նոյն իսկ բարեւելու, ճիշտ տարի մը հաւատացէ՞ք առանց այդ գիտնական հսկողին բարեւին արժանանալու դասախօսեցի:

Սակայն միշտ մեծ հաճոյքով կը դասախօսեմ, եւ չեմ ուզեր որ երբէք իմ ուսանողներուս սիրտը կտրեմ, որոնք միշտ բարձրագոյն թիւերով կը վարձատրեմ:

Գրեթէ քսան տարիներէ ի վեր կը դասախօսեմ Սկիւտարի այս Ս. Խաչ վարժարանը, դեռ մէկը ծեծած չեմ, է՛ն բարկացած պահուստս խօսքը միայն կըսեմ « ծօ՛, տղայ, դուրս կը հանեմ », լաւ չը՛լլար արդեօք երբ իմ այս օրինակիս հետեւի նաեւ ուսուցիչ ինկիլիզեան Խաչիկը, որ յոռի սովորութիւն մը ունի խեղճ տղաքը ծեծելու:

Ես բաւական հմտութիւն ունիմ հայ. լեզուին մէջ, Ֆրանսերէնի ինչպէս նաեւ կրօնական ու բարոյական գիտութեանց:

Այս օրերս մտադիր եմ ընտրել կեանքի ընկեր մը: Ահա կեանքս »:

Կարծեմ պատուելի Պատմաճեանի այս վերոգրեալ տողերը բաւական պերճախօսեն, ներկայացնելու համար իր գործունէութիւնը մեր ուսուցչական ասպարէզին մէջ:

• • •

Գալ անգամ պիտի սկսինք ներկայացնել Օսմաներէն լեզուի ուսուցիչները, որոնց մէջ առաջնութիւնը ու պատուոյ տեղը պիտի տանք հանրածանօթ ու հեղինակաւոր ուսուցիչ ՊԵՏՐՈՍ-ՉԷԳԻ ԷՓ. Կարապետեանի:

Լ Ե Ի Ո Ն

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Տիկին մը սպասուհին ճամբած ատենը 20 զրուշ վար կը դնէ ամսականէն, իր փոխարէն կոտրած ապակիներուն:

— Ի՞նչ, տիկին, կը հարցնէ վարմացմամբ սպասուհին, գէթ առաջուց ըսելու էիք որ ես ալ քիչ մը ուշադիր ըլլայի:

ԼԱՍՏՈՅՐ ՍԸ

(Մեմախօսութիւնն դեռաւսի աղօղան համար)

— Ի՞նչ է համարյորը: Հարցումս ձեզի տա-
րօրինակ կը թուի: Բանաստեղծը կ'երգէ
այն հեշտալից միացումը որ կը յափշտակէ
ձեզ երբ երկու կարմրագեղ չրթունքներ
պատշաճին պաշտուած էակին դէմքին վրայ:
Գիտունը գեղջկական քննախօսութիւններ
կ'ընէ համարութեւնը վտանգներուն վրայ,
կ'ըսէ թէ մարդ իր անձը միջոցներ փո-
խանքով վտանգին կ'ենթարկէ: Զարհուրելի
են գիտութեան յառաջդիմութիւնները:

Բայց վերջապէս, ես ձեզի պիտի պատ-
մեմ ինչ որ գիտեմ հայրօրի մասին: Փոր-
ձառութիւնս երէկուրն է կը սկսի: Երեք շա-
բաթ առաջ մամասսս պիս նշանած էր Ֆիլիբ
տը Բէրսօնէ դերակոմսին, մամասսս զիս նշա-
նած էր, կ'ըսեմ, որովհետեւ ես կրաւորա-
կան դիրք մը բռնած էի: Դերակոմսը ինծի
հաճելի չէր — այնքա՛ն պաղ, այնքա՛ն սա-
ռըն կ'երեւէր ինծի — բայց ամուսնութեան
մասին ո՛ր եւ է դիտողութիւն ընելու չէի հա-
մարձակեր, որովհետեւ այս փայլուն փեսա-
ցունին դէմ լուրջ պատճառներ ալ չունէի չի-
տակը:

Դերակոմսը, ամէն օր, սքանչելի ճերմակ
փունջ մը կը զրկէր, ամէն օր խղճմտօրէն
կուգար, մամայիս ներկայութեանը, հիւրա-
սենեակին մէջ, իր դարպասը ընել: Անձե-
ւին, օդին գեղեցկութեանը վրայ կը խօսէ-
ինք եւ ասիկա զիս կը ծանձրացնէր: Դերա-
կոմսը, ինքն ալ, յաճախ վարպետութեամբ
ձեռքովը զարհուրելի յօրանջ մը կը ծածկէր:
Ինքնիրենս կ'ըսէի.

— Բայց այս ամուսնութիւնը իրեն այն-
չա՛փ ախորժելի է որչափ ինծի: Ուրեմն օ-
ժիտէ՞ս է որ փորձուած է:

Երէկ, մինչ մամասս հիւրասենեակին մէջ
կ'ասեղնադրած էր, զինքը կանչեցին: Մեր
վրայ մտատանջ նայուածքներ նետեց: Մեզ
մինակ թողո՛ւլ... իր բովանդակ մայրական
արթնութիւնը կ'ըմբոստանար: Բայց ստիպ-
ուեցաւ ներողութիւն խնդրել:

— Պարոն դերակոմս, ներողութիւն,
փայրկեանէ մը կը վերադառնամ:

Դուռը գոցուելուն պէս, համեստութեամբ
եւ աչքերս խոնարհած, ուղեցի շարունակել
մեր խօսակցութիւնը օդին վրայ:

— Շնորհ, շնորհ, գոչեց Պ. տը Բէր-
սօնէ խնդալով. այս տափակ նիւթերը ձեր
տիկին մօր վերադարձին պահենք: Մեր նը-
շանտութէն ի վեր առաջին անգամ ըլլալով
մինակ ենք, թոյլ տուէք ուղղել ձեզի հար-
ցում մը որ երեք շաբաթ է ի վեր չրթունք-
ներս կ'այրէ:

Զարմացած, աչքերս վեր վերցուցի: Դե-
րակոմսը փոխուած էր, աւելնով կը խօսէր,
աչքերը կը փայլէին, բոլորովին թօթափած
էր այն պաղարիւն հանդարտութիւնը որ
ինծի ա՛յնքան անհաճոյ եղած էր:

— Բայց ուրեմն, պարոն, մամասս ձեզի
նեղութիւն կը պատճառէ:

— Ա՛հ, անտարակոյս այո՛: Ի՞նչպէս կա-
րելի է խօսիլ երբ կայ հոն երրորդ անձ մը,
որ արտասանուած իւրաքանչիւր խօսքին ի-
մաստը կը չափէ, բայց օրիորդ Մարկրիդ,
պատասխանեցէք, ըսէք, կը սիրէ՞ք զիս:

— Օ՛հ, ո՛չ, ըսի, սարսափած այդ տե-
սակ հարցումէ մը:

— Ի՞նչպէս, ո՛չ, եւ սակայն կը հաւա-
նիք ինծի հետ ամուսնանալ:

— Այո՛, վասն զի մայրս ըսաւ ինծի թէ
դուք իր աղջկան համար երազած ամուսինն
էք:

— Ուրեմն կը կարծէք թէ զոքանչէս սիր-
ուելու պէ՛տք ունիմ: Դուք էք, օրիորդ,
որ ձեր սիրտը պիտի տաք ինծի:

— Բայց, պարոն, ասիկա shocking պիտի
ըլլար:

— Բայց ի՞նչպէս, shocking սիրել մէկը
որուն ձեր հաւատարմութիւնը պիտի երդ-
նուք ութ օրէն, խորանին առջեւ:

— Օ՛հ, անգամ մը ամուսնանալէ վերջ
մարդ իր ամուսինը կը սիրէ:

— Միամիտ աղջիկ, գլուխնիդ ծիծաղելի
գաղափարներով այնպէ՛ս մը լեցուցեր են
որ կատարեալ խղճմութեամբ կը հաւատաք
անոնց, բայց, ըսէք ինծի, ձեզի հակակրե-
լի՞ եմ:

— Օ՛հ, ո՛չ, պարոն:

Որքա՛ն գեղեցիկ կ'երեւէր ինծի այն բո-
ցով որ կը փայլէր իր նայուածքին մէջ: Կա-

ընդհանրապես որ մամայիս բացակայութիւնը զինքը այս աստիճան փոխած ըլլար ...

— Ապահով էք թէ զիս պիտի սիրէք երբ ամուսնական մատանին ձեր մատը անցնի, ինչ որ առանց պատշաճութեանց դէմ ընդվզելու պիտի թողուք ընել:

— Կարծեմ թէ, պարոն, ըսի ցած ձայնով:

— Եւ մինչեւ այն օրը, քիչ մը պիտի չսիրէք զիս, Մարկոս:

Օ՛հ, բայց սարսափելի է դերակոմսը զոր այնքան պաղ կը կարծէի: Հիմա զիս ա՛լ օրիորդ չի կոչեր: Մարկոսիդ կ'ըսէ կարծ մը: Գործը աղէկ կ'երթայ:

— Ըսէք, Մարկոս, պատասխանեցէք, կ'աղաչեմ, հիմա սիրուիլ կ'ուզեմ:

— Բայց պարոն չեմ գիտեր ի՛նչ պատասխանեմ:

— Է՛, շատ պարզ է, ըսէք ինծի, Վիլի, կը սիրեմ ձեզ:

Ոտք ելայ:

— Ո՛չ, պարոն, ատանկ բան չպիտի ըսեմ ձեզի, ասկէ զատ ինչո՞ւ, զիս կը սիրէ՞ք դու:

Համարձակութիւնս կը սարսափեցնէր զիս:

— Բայց Մարկոս չէ՞ք գիտէր: Կը պաշտեմ ձեզ:

— Պարոն, ի՛նչպէս պիտի կրնայի զայն հասկցած ըլլալ:

— Մարկոս, ձեզի ուրիշ հարցում մը ընել պիտի ուզէի, բայց կը վախնամ որ ձեզ կը խորշեցնեմ:

— Օ՛հ, ա՛լ ձենէ չեմ վախնար, պարոն, ըսի ծիծաղելով:

— Քանի որ նշանուած ենք, քանի որ գիտէք թէ ձեզ կը սիրեմ, եւ քանի որ կը կարծեմ թէ զիս չէք արհամարհեր, լուրջ արգելք մը չկայ թոյլադրելու համար զիս որ ձեզ համբուրեմ:

— Օ՛հ, պարոն:

Բոլորովին սոսկացած էի, բայց ուրեմն հրաբուխ մըն է դերակոմսը:

Յանկարծ տեղէն ելաւ եւ եկաւ իմ քովս նստաւ:

— Մարկոս, կը պաղատիմ, միակ համբոյր մը տուէք: Ձենէ ծածկել չեմ ուզեր, միայն երբ դուք հրաման ընէք այն ատեն համով պիտի ըլլայ այդ համբոյրը:

— Բայց բաց ի մօրմէս ոչ ոք զիս համբուրած է:

— Է՛, ես ալ ձեր նշանածը չեմ:

— Օ՛հ, բայց ... եթէ բացարձակապէս կը պնդէք այդ մասին ... պաշտիկ ... միայն մէկ անգամ ...

Կրկնել չտուաւ: Պեխերը այտիս վրայ քսելով հանդերձ կը մրմնջէր:

— Հիմա, Մարկոս, ըսէք, «Յիլի, կը սիրեմ ձեզ»:

Ապահովաբար այս համբոյրին մէջ մագնիսական ազդեցութիւն մը կար, որովհետեւ հղութեամբ կրկնեցի:

— Յիլի, կը սիրեմ ձեզ:

Այս հոգեբանական վայրկեանին, մամաս երեւցաւ սեմին վրայ: Տեսարան ... Ես, չփոթած, կաս կարմիր կտրած ... Մամաս տակնուվրայ եղած, շանթահար: Կը կարծէր թէ զիս շատ լաւ դաստիարակած էր ...:

Բայց, հանդարտ ու ժպտուն, Յիլիբ առջեւը ցատկեց:

— Շնորհակալ եմ, տիկին, որ վերջապէս թոյլատրեցիք զիս ձեր օրիորդ աղջկան հետ քանի մը գաղտնիքներ փոխանակել: Կրցայ ինծի նկատմամբ ունեցած զգացումներուն մասին ապահով ըլլալ, եւ կը կարծեմ թէ մեծ յանցանք մը չգործեցի նշանածս համբուրելով:

Խեղճ մամաս, չհամարձակեցաւ բողոքել, դերակոմսին տոհմանչանը անարատ է եւ իր հարստութիւնը անհուն, ամէն օր անոր պէս փեսայ չի գտնուիր:

Պաշտով ինծի, ո՛րքան երջանիկ եմ: 'Իր տեմ թէ Յիլիբ զիս կը սիրէ, ես իր սէրը կը փոխարինեմ իրեն եւ երջանկութիւնը յայտնօրէն կը շողջողայ, շնորհիւ համբոյրի մը:

Թարգ

ԼԻԼԻ ՊԻԻԿԼԵՐ

ՎԱՂԱՐՇ ՊԵՐՊԵՐԱՆ

Ծ. Խ. — Հաճոյքով կարճանագրենք Վաղարշ էֆ. Պէրպէրեանի անունը իրր աշխատակից «Հանրագիտակ»-ի: Կը յուսանք թէ մեր ընթերցողները հաճոյքով պիտի կարդան իր հմտալից թարգմանութիւնները եւ սրամիտ ու երգիծական յօդուածները:

ԳՐԱԿԱՆ ԱՏԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՍ I

Ա. Յօղուած

~~~~~

Հաւատացէք երբէք չպիտի ուզէի գրական աղբարիկներուս եւ քուրիկներուս սիրտը կոտրել, այս յօդուածովս քանի որ անոր միջոցաւ պիտի թափեմ իմ լտեսութիւններս, եթէ սա բարեկամներս քանի մը անգամներ զիս չստիպէին որ սա՛ սակաւ ! գրչովս դարձեալ հրապարակ նետուիմ :

Բայց, Աստուած իմ, ո՛րկէ սկսիմ եւ ո՛ր վերջացնեմ : Քանի որ կեանքիս մէջ տեսածներուս, լսածներուս, գրածներուս, կարդացածներուս եւ սիրածներուս <sup>3</sup>/<sub>1</sub>ը կ'ատեմ արդէն, երանի՛ անոնց սակայն՝ որ մնացած <sup>1</sup>/<sub>1</sub>ին մէջ գտնուելու բարեբաղդութիւնն ունին, ապա թէ ոչ ... և բաներնին բուրդ էր :

Հակառակ անձնապէս մեր չքնաղ գրագէտ Չիֆթէ-Սարաֆ Օննիկին, ամենամըտերիմ բարեկամը ըլլալու՝ կ'ասեմ իր այն յօդուածը, որ երեւցաւ Արեւելեան Մամուլին մէջ եւ որ մեր չքնաղ գրագիտուհիներէն մէկուն մեկնուիմ կողմար : Ո՛հ կորսնցուցինք, չքնաղ գրագիտուհին :

Թօլայեան Երուանդ, չքնաղ բարեկամս քիչ մը քիչ գլուխ պիտի ուռցնէր, Օր. Նինի չպիտի շարունակէր իր համով հոտով օրագիրները, եւ ես՝ առիթը չպիտի ունենայի երկու երես բան մրոտելու : Ու քանի որ աղանաւորը կորսնցուցինք, այս ամէնքը դարձեալ ըստ առաջնոյն կը շարունակուին, եւ ես՝ ցաւելէ աւելի կը հրճուիմ կարծես, եւ ասոր պատճառը մտադրած եմ հարցնել Ազնուամեծար բարեկամիս Չիֆթէ-Սարաֆ Օննիկին, որ այս միջոցիս սուգի մէջ է ապահովաբար : Բայց այսու հանդերձ կը խոստովանիմ, Պ. Օննիկ ո՛րն է՝ չքնաղ գրագիտուհին, միակն է իբրեւ թարգմանող, կին գրողներուն մէջ եւ մեծ հաճոյքով պիտի կարդացուին իր գրածները դարձեալ եթէ սակայն այս անգամ իր ստորագրութեան քովի կը « թարգմանեց » բառը աւելցնէ հոգ չէ թէ փոքրիկ գրերով — քանի որ ալ տրամադրութիւն չունինք կլլելու — եւ այն ատեն մեծ հաճոյքով պիտի յիշա-

տակեմ իր յօդուածները « գրական պաշտօններուս մէջ » :

— Չեմ գիտեր ինչո՞ւ արդեօք մեր Մալկարացի մեծահռչակ բանաստեղծին յօդուածները կարդալէս անմիջապէս վերջը լաւ տրամադրութիւն մը կ'զգամ, եւ Պարսամեան Միրիճանին ոտանաւորներուն ընթերցումէն վերջ աղջկան մը հետ սիրահարուելու տրամադրութիւն մը, ինչո՞ւ արդեօք Թօլայեան Երուանդին յօդուածները կարդալէս անմիջապէս վերջ խիթերս կը բռնեն, ինչո՞ւ չեմ հասկնար Գոլանճեան էտուառին գրածները, եւ ինչո՞ւ արդեօք Ե. ին երկարապատում phrasésներուն մէջէն չեմ կրնար ելլել, ապահովաբար այս ամէն ինչուններուն պատասխանը ա՛յն ատեն միայն պիտի կրնամ տալ եթէ սա՛ ջղալին տրամադրութիւնս հեռանայ ինձմէ ու այն ատեն ամէն բան ոսկի պիտի տեսնեմ անկասկած : Եւ քանի որ այս այսպէս է, mon cher, պատճառ մը չեմ գտներ Կօնքուռներու թարգմանութեան մասին լուռ մնալու, քանի որ ան ալ ճիշտ այս միջոցիս գրասենյակիս վրայ գտնուելու բաղդին արժանացած է իբրեւ գրական մի հրաշակերտ ! : Շատո՞նց գիտէի թէ Մալխաս Գր. անգլիէրէնը գիտէ a little, Փրանսերէնը ի ծննդենէ կըլլած է եւ հայերէնը կլլելու վրայ, եւ ապահովաբար եթէ հայերէնն ալ Փրանսերէնին չափ կլլած ըլլար այսքան չքնաղ ! Թարգմանութիւն մը հրապարակ չպիտի նետէր : Գոնէ զիս մեղքնայիր սիրելի Մալխաս Գր. որ 10 զրուշս սիրայօժար տալէս վերջ 6 օր ալ գիշեր ցորեկ գլուխս ճաթեցուցի քու վսեմ թարգմանութենէդ բա՛ն մը հասկնալու համար, եւ սակայն աւա՛ղ բան մը չը հասկնալէ զատ քիչ մնաց գիտցածներս ալ վրայ պիտի տայի, ո՛հ, ինչո՞ւ այսքան անգութ ես ընթերցողներուդ մասին սիրելի Մալխաս Գր. : Բայց սիրելի Մալխաս Գր. կատակը մէկ կողմ, դուք կրնաք առաջնակարգ թարգմանիչ մը ըլլալ մեր մէջ՝ երբ հայերէնը սովորիք comme il faut :

Բերս

ՊԵՏԻՆ



Սրդողեղիս վերջ, երբ ըլլար գիշեր.  
( Գեհեո. չունեցողն պատժեն, չե՞ս յիշեր )

Երագիս մեջ յար՝ կուգար կը սահե՞ր  
( Եւս ծանր մ'ուսեր գիշերունս պահե՞ր )

Պանծայի դեմքդ զոր ես պաշտեցի  
( Դիմանալով միշտ հօրդ կոշտ ծեծի )

Որքան ասեմ որ սիրեցի քեզի  
( Ծօ անկե գոյնըդ դարձե՞ր է պեղի )

Խա՛ղ, եիմ երագ ասոնք բոլորն ալ  
( Ինչպիսի ուսելըդ պաւեա, ոյսուն ալ )

Համակ կործանող իդձեր ոսկեփայլ  
( Պիկնձն ալ այդպիսի մնայ անայլայլ )

Այն նամակները զոր պահած ունիմ  
( Պատռե ծօ հայրդդ, հարցընե՛ պո՛ւ քիմ )

Կրնա՞ն սիրուիլ սիրքս ցաւագին  
( Ինչո՞ւ չե հոգիս, գալիս սուրբ պահիմ )

Ո՛չ դարձեալ կուգեմ՝ խօսիլ ո՛հ հոգիս  
( Գնա խօսե, բայց չեղիս բորբոքիս )

Նագեղի ձեւերդ քեզնէ գեղունիս  
( Եւր մը արդեօք ո՞ր գիւղը ունիս )

Եկո՛ւր, սիրելի՛ս, հաշտուիմք նորեկն  
( Չկրողիք կրկին դուք անգործեկն )

Անկեղծ սիրով մը գիրար մենք պաշտենք  
( Նայեցե՛ք քեզը ըլլայ երկու տեկն )

Նոյն իսկ ի հարկին ծխրիմք այս սերեկն  
( Արդեօք կերա՞ք մի Իզմիսի սերեկն ) :

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՆԵԱՆ

Ծ. Խ. — Խմբագրութիւնս հարկ անհրաժեշտ դատեց այս գեղեցիկ ոտանաւորին իւրաքանչիւր տողին տակ փակագիծի մէջ բացատրութիւններ տալու այս չնաչխարհիկ սէրին մասին։ Այս առթիւ ի գիտութիւն յիշեալ քերթողին՝ կը ծանուցանենք թէ թուղթին գինը 90 վրայ դրած է, եւ մեղան ալ 30 փարայէն 30 շրջանի բարձրացած է։

Գ.

## ՊԵՆԿԼԻ ԹԱԼԻԴԱ ԿԵՐՈՋԸՍ

Էրկու աչկիս լուսը, ճան ճիւղեր Թալիդա քուրիկըս։

Քա քուրիկըս, աս կիրքս օր քեզի կը խաւրեմ կոր նէ, զիհնէդ չանցունես քիմ պոստային փարան հսրկէմիւ ըրի տէյիմ, մահառուտանա Անրակիտակի մէջ կը կրեմ կոր վոր, դուն ալ հոն կրելուդ, էվ նստած մահալէդ չը կիտնալուս՝ աս զազէթային մէջ կը կրեմ կ'որ կիրքս։

Անըման քուրիկըս, որքան որ հրամանք նոցը հետ խօսք խօրաթա, պարեւ Աստուծու պարին չունինք նէ, կիտցած ըլլա քիմ ես անանկ պանպաս ընող ջանջան կնիկներէն չեմ հա։

Նայէ տիեօր աս օրըս տահա պերանըս պացած տէ պան մը ըսած չունիմ, ֆուրունին տիպը նստող տէլլալ Հոռօփսիմային, քիմ, խօսքը ինէ էլած չըլլայ, առտու իրկուն մատիկ օյունի կը խաղայ կոր տիմայի հէրիֆին հետ։

Էլմաս քուրիկըս, զազէթային, կէցի նալիմ վոր զազէթային, հա՛ Անրակիտակի մէջ կրածըդ կարգացի։

Վույ կընիկ, Ասված մարդս զազէթածիներուն ծառքը չը ձգէ։

Իմ կլոսըս ալ էկած է տէ անկէ կիտեմ։

Օղորմած օգի ամուճայիս կնկանը լուսերու մէջ պառկող տայիին փեսան՝ լուսահոգի լաքէթածի հաճի Պաղտիկը տիպի մինտէրը ժամը մոռցեր էր։ Զավալըն մայասըլ ունէր տէ պիր տիւզիւյէ մը վրան չէր կրնար տոտոռողանմիւ ըլլալ։ Ժամուն աղաները մինտէրին տէր էլան չը տուին։ Զէրկընցունեմ, ուզեցի քիմ զազէթան կրել տամ։

Աչվընին խաղայ հէմէն, քա քուրիկ, կըրելու համար 3 մէճիտիյէ մասարիֆ չուզէնան մի՞։

Հա՛ քա, ան պիտոր ըսէի վոր, ան Թողլընան ըսած տղադ չատոնց կարգըներ տէ, իմացածիս նայելով կընիկն ալ չորս ամսու մէջ է եղեր։

Աման քուրիկս, էս ըսեմ մինակ դուն

իմացիր, անանկ կընիկ մըն է առեր քիմ, խօսքըս ամօթ վառսա կոսսա պան մըն է:

Տիեօր իրիկուան սահաթը մէկերը տօղ-  
րուն սայցա զարնեղէն խալտըրըմները չէօ-  
քիւթ միշ ըրին:

Իմ կլոխըս սավոր չպառկեցաւ քիմ ան  
մարդը քրանդա պըյըխներէն չամըշնալով  
նասը՝ աղջիկանըդ աչք ընքվի կ'ընէ: Կիտի  
կիտի սէնի, կէցիր տեսնամ տէ աղւոր մը  
չինեմ, ինտոր քիմ ինքն ալ անցած օր Մա-  
զուրմէին մէջը Հոռոփը նկանակեր էր:

Ճիյէր Թալիդաս, քու կլոխըդ հըած  
տէրտին մէկ ձօթն ալ էս էմ պոնած:

Ամմա, դուն անանկ տունով տեղով խըյ-  
մաթը պոլանթի աղջիկ ունիս տէ, ինչո՞ւ  
կ'ելլէս զազէթաները իլան կուտաս քա՛,  
չաչսըն կընիկ, չես կիտեր քիմ հիմակուան  
մարդերը տիւնանի կը հանեն տէյիմ:

Անկից սօղորամ տահա խըզլըն կայ:

Ինչո՞ւ զազէթային միջուկը չը ճանչցած  
զազէթանիդ կը պացվիս կոր:

Ըսէմ տէ անկըճիդ օղ ըլլայ քուրիկըս,  
անոնք անանկ խըյանէթ մարդիկ էն քիմ,  
անոնց առջեւ պացվեցար մի՛ չեն ձգեր քիմ  
կոցվիս ետքը:

Տաներէց տէր պապա չունէ՞իր քա՛, ա-  
նոր պացվէիր նայէ նասըլ աս կործը խուն-  
տախին մէջ իքէն չըփ տէյի կէփեր:

Հիմաճուկ պան մը տահա պիտոր ըսեմ  
ամմա, չելլես ներսիդիյէդ անցունես քիմ,  
աս կընիկն ալ իր մաթահը առաջ քշտելու  
կը նայի կոր տէյիմ, սախըն հա՛, էս անանկ  
կընիկներէն չեմ, մենծ խօսիլ չըլլայ, էրկիր  
պնտուես նէ երկինք կիւճպելա կը կտնաս:

Աս ալ ըսեմ քիմ, վորի որ հարցունես  
բասիանճի Թուրֆանտային տունը տէի,  
տուռիս չախչախը ծառքդ կուտան:

Չիւնքիւմ ինքըզինքս կովել չըլլայ, առա-  
տա պիր, սանկ մէյ մը ասոր անոր կաթ  
տուղ կնիկ եմ:

Թալիդա քուրիկըս, էկու Աստուծոյ հը-  
րամանքովը սա խըսմէթը մէրը ըլլայ, էս ալ  
թէք պըյըխ տէլիխանը ճիվան զաւակ մը  
ոչնիմ:

Ջաւակըս է տէյի մէթ ընել չըլլայ ամմա,  
վրան նայիս նէ պահպանիչ մը ըսելդ կու-

գայ: Դպրոցին մէջ մէկ հատիկ է տէյի մէ-  
թիյէ կուգար ինծի: Ժամ վոր էրթար նէ  
կայ եա, փիւթին աղաները վէօս էկօ ծօ  
ըսելով պագ կուտ կուտային տըղուս:

Շէյթանին անկըճին պամպակ, վախթով  
մահալլէնիս մենծ կրակին տըղաս, քուկինիդ  
վրան բարի, վախէն տրսէվէ չըլլալն պաշ-  
խա, ան համալներուն չկրցած մտած տեղ-  
ուանքը մտաւ աէ էչեա փախուց:

Վէլհասըլ քուրիկըս, օր քիմ կուգես վոր  
աղջիկդ ըռափութալը տեղ մը խօթես, է-  
կուր տըղուս տուր տա, էս ալ կերեզման չը  
մըտած օրդիիս պսակը պագնեմ տէ  
աշկըս էտեւ չը մնայ:

Ամմա քուրիկ, կեզի պան մը ըսեմ, էս  
անանկ զազէթայով կործ տեսնալ չեմ ուզեր:  
Առջեւնուս հինգչարթին, տէմիրճի է, չիլին-  
կիր է, ինչ է նէ, Ղալաթիա էրածայն պի-  
տոր ընէ հղէր:

Եթէ ողջ մնանք նէ էս ալ կուգամ, դուք  
ալ կուգաք, հէմ էռածայնը մտիկ կընենք,  
հէմ աս կործը ուռումիզտէն մը կը հասկը-  
նամ, հէմ ալ էտքը էրկու լոխմա պօղաչա  
կուտենք:

Քա աղուոր Թալիդաս, տունդ պէլլի ըրէ  
քիմ, Օքսէնիս ըսեմ տէ ծեր տունին առ-  
ջեւէն անցած ատենը, սա մենծ թէնճիրէդ  
առնէ չափէլային վրայ տընէ տէ պէրէ, գէ-  
րէմ տօլմա պիտոր դընեմ թէնճիրէ չունիմ,  
օրթա պօյէն հատ մը ունէի, չունչանորդի  
խալայճին մէյմըն ալ մէջտեղ չը հանեց:

Կիրըս Թամամցընելով էրկու եանախնե-  
րէդ ճիյէրէս կը պագնեմ:

Քուրիկըդ

Քոշէի պախալին տիպը

նստող քասիանսնը

ԹՈՒՐՅԱՆՏԱ

## ԶԱՏԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Գոհութիւն Աստուծոյ, թէպէտեւ անձ-  
րեւոտ օրեր չունեցանք ու պայծառ օղով  
մը անցուցինք տօնական օրերը, բայց եւ  
այնպէս նազելաչուք տիկնայք հազիւ կրցանք

քղանցքներն ժողովելով անցնիլ եկեղեցիներուն բակերէն, հոն լծացած ջուրերուն պատճառաւ:

X

Ինչպէս որ կիները շուարած էին Աւագ շարթուն թէ՛ « ժամ վազեն մի բաղնիք » այնպէս ալ աէր պապաները շուարեցան « թէ՛ ժամ վազեն մի գերեզմանատուն »:

X

Նազեւածեմ ու քաղկ-պայաք քօքէթ օրիորդ մը զատկի աթիւ դրած մազի ներկին խրվամը անցուցած, ու քիչ մը աւելի խուզողունի ըրած ըլլալուն, բոլորովին անճանաչ եղաւ, ու ստիպուեցաւ տունը մնալ:

X

Բարեկամիս մտերիմներէն  $25 + 10 + 15 + 5 = . . .$  Նոց քրժըլ երիտասարդ մը, որ բնաւ ըմպելիք չէր գործածեր, շնորհաւորութեանց առթիւ խմած քօնեակներէն զըլուխը դառցած, այցելութենէ մը մեկնած պահուն, առջին գտնուած սանդուխը երեք մէթր անդին տեսնելով, առանց քաշելու բակը իջաւ, ու կռնակով իր տունը վերադարձաւ:

X

Շատ մը այցելութեանց միջոցին դիտուեցաւ թէ՛ խմուած քօնեակներուն հետեւանքով « Բրիստոս յարեալ ի մեռելոց » « Ղարցուցիչ մոլորեցոյ » ին կարգը անցած էր:

X

Այս շարթունէ սկսաւ պատրաստ հանդերձեղինաց վաճառատան (խօսողունի) քահնիչսարը հասցէներուն դիմել:

X

Խիստ զոհ ենք որ մեղրածորան քարոզիչը, մեծ պահոց քարոզներէն սկսեալ եզական նմանութենէն վազ անցած է ու ճաբոնական նմանութիւնը սիր կիսսին կ'ընէ իր քարոզներուն մէջ:

X

Հեռաւոր թաղէ մը Սկիւտար այցելութեանց եկող չիք միւսիւի մը 25 բոլորնոց խափափ իշի սկարթիկին տակը ինկաւ:

X

Այս տարի խթումը Ապրիլ մէկին հանդիպած ըլլալով՝ շատ մը էրիկ մարդեր յայնդեցան իրենց կիները խաբել ապսպրուած բաներուն շատերը նոյն օրը չի բերելով:

X

Թաց-փէշտիմալ միւսիւ մը, իր մէկ այցելութեանը այնչափ նստեցաւ ու կէվէզէութիւն ըրաւ որ, զայն ճամբու դնելու համար հարկ եղաւ օրիորդները դուրս հանել սենեակէն, ու զինքը ձգել եփսիւնոց թիւթիւնի բաքէթով սիսիսինոց տիկինին հետ:

X

Օրիորդ մը այն աստիճան զգացուեր ու վշտացեր է իր նշանածին այցելութեան չի գալէն, որ մտադրեր է անմիջապէս նշանը ետ ընել, երբ ուրիշ նշանած մը գտնէ սակայն:

X

Արդէն մտադրած ըլլալով մեծ նուիրատուութիւն մը ընել Հիւանդանոցին՝ երբ հարստանամ, (չէ՞ մի որ արդէն հարուստներն ալ կանխաւ ինձ պէս հարուստ չէին) հետեւաբար ազատ կացուցած եմ իմ պատուական անձս, տղմաթաթաւ կամ փոշիաթաւալ տունէ տուն ու փողոցէ փողոց սիրտս միշ ընելէ:

Որով կը մնամ  
եղած տեղս  
ԵՐՄՈԳ

## ՀԻՆ ԷԶԵՐ

ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Այսօր տօնեմք, ձեզ աւետիս.  
Ահա՛ ցընծամք յայսրմ տօնիս.  
Բարո՛վ տեսայ զաւաթն յափիս:  
Գաւաթն որ եկ՝ մեծ ապխորն յիս՝  
Գինիս անոյ՜ երբ ճաշակես՝  
Դու այլ խըմէ՛ ըզգաւաթնիս:  
Ես քեզ կարաս բանամ գերիս,  
Եւ քեզ բերեմ անոյ՜ գինիս:  
Զի դու խըմես եւ կարմըրիս,

Էրէց, տանուտէր, զոր կամիս,  
Էպիսկոպոս, արեղանիս,  
Ընդ ձեզ խըմենք եօթն ութ ամիս,  
Թէ դու լըսես իմ խորատիս,  
Թո՛ղ դու հազար տարի ապրիս:

Ինձ մեծ աման տո՛ւր՝ թէ ունիս.  
Ի քեզ նայինք երիցանիս.

Լի՛ց տո՛ւր, ե՛ղբայր, ինչ կունայիս:  
Խընդամբ ամէն շուրջ կարասիս,  
Խորվենք հող տաք ոչխըրի միս.

Ծողկունք բերենք մէջ ժողովիս:

Կամկա՛ւր կերէ՛ք զամէն բարիս,

Կաւաթ լըցէ՛ք շուրջ սեղանիս:

Ձեզ շատ էրէց գայ յայս տարիս:

Հարիպ շահրիս զորս ընդունիս:

Ճերմակ գինի լաւ դեղ սըրտիս,

Ճաշակն անոյշ, հա՛մն առ ու տե՛ս.

Մեք այլ այտից խըմենք այտից:

Յարի՛ ՚ի վեր հաշտեա՛ց ընդ իս.

Յարի՛ խըմէ՛ համբուրէ՛ զիս.

Նոյնպէս ամէն ժողովրդիս:

Շուտո՛վ խըմէ որ դու օրհնիս.

Շատ մի խըմեր, քուն չը լինիս.

Որ դուն գինւոյն պահակ նըստիս:

Չորս մեծ գաւաթ տո՛ւր՝ թէ ունիս.

Չափով մի՛ տար քո ծառայիս,

Պըզտոր մի՛ տար քընքուշ լերդիս:

Ջուր մի՛ խառներ, որ չոյտ հարբիս.

Ռամկաց շա՛տ տուր յայսմ ատենիս:

Սիրով խըմէ՛ վեց թաս ՚ի յիս.

Սէլն Աստուծոյ կամ սուրբ Սարգիս.

Վեց տաս, ու վեց հարիւր շահիս:

Տանձ եւ խընձոր, նուռն իմ առջիս.

Տաւըն դեռ կան ՚ի գըրպանիս.

Բամեալ գինի բերեմ հարկիս:

Յընձման արժան արար Տէր զիս.

Յաւօք մաշիմ յայսմ աշխարհիս,

Իլիսին պըսակ տո՛ւր կարօտիս:

Փըրկեա՛ խընդրեմ՝ զողորմելիս,

Քո Մարտիրոս Խարասարցիս:

Ծանօթութիւններ. — Դժբախտաբար կա-  
րելի չեղաւ մեզ ոտանաւորիս հեղինակին  
ինքնութիւնը երեւան հասնել: Բայց կերելի  
որ 19րդ դարուն ապրող աշուղ մըն է, քա-  
նի որ ինքզինքին շահիր (շաիր թուրքերէն  
« բանաստեղծ ») մակդիրը կուտայ: 19րդ

դարուն մէջ ապրած ըլլալուն փաստ մը կըր-  
նայ նկատուիլ նաեւ լեզուն՝ որ բաւական  
կոկուած ու խնամուած ռամկօրէն մըն է:

Այս ուրախութեան տաղը հեղինակած  
պիտի ըլլայ անուան տօնախմբութեան մը  
առթիւ, զոր անշուշտ սաղի վրայ ալ ածած  
է: Աշուղը քաջալերուած տանուտէրէն գը-  
տած ընդունելութենէն կը հրամայէ տակա-  
ռապետին շատ գինի տալ իրեն, եւ ինք  
չիմել, որպէս զի քուն չըլլայ եւ կարենայ  
կարասին պահակութիւն ընել:

Ամէն պարագայի մէջ, ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱ-  
ՐԱՀԻՍԱՐՑԻՆ մեր ժողովրդական բանաս-  
տեղծներուն մէջ պատուոյ տեղ մը կը գրաւէ:

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

ՓՈՔՐԻԿ

## ՆՈՒՊԱՐ ԲԱՐՈՒՆԱԿ

Գունդուղիկ մանչուկ, աղուորիկ նուպար,  
Բոպէ մը ձգէ սա խօշ խաղն ու պար,  
Ինձ եկուր, ըսէ՛ դեմքովդ ո՛ւր դրպար,  
Գունապընակի՛ն, թէ տիկնոջ շրպար:

Ասանաւոր մը ըսէ, անառա՛կ,  
Բա է շան, հոգ չէ, ըլլայ ան առակ,  
Հաւնեցայ, ապրիս, առ ի՛նչ աշ աղուոր  
Արսասանեցիր, կեցցէ իրաւոր:

Մանրիկ հասակըդ երեք տարեկան,  
Բնաւ չես կենար, նըման սարեկան՝  
Իրկուն թէ առտու շարունակ կ'երգես,  
Կեանքդ ամբողջ աշխոյժ, հաւնակ խաղ, երգես:

Երեսըդ կտր լուսնակ անուշիկ,  
Այսերդ է նուռ, դուշըդ աշ նուշիկ,  
Նըմանը չըկայ աշխուշ անբարթ,  
Էն պահէ ըզնեզ սիրուն եւ ... հանդարտ:  
Բերա

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

## ԶԱՏԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ամէն դասակարգի ու ամէն տարիքի վերաբերող մարդիկ սանկ տեսակ մը իրարանցումի մէջ կը նշմարուէին վերջացող շաբթուան մէջ:

Ամէն մարդ ուրախ երեւոյթ մը ունէր բացի ընտանիքի տէր հայրերէ, որոնք Զատիկի առթիւ բացառիկ ծախքեր ընել ստիպուած էին, քիչ մը աւելի հաճելի երեւնալու իրենց ազնիւ տիկինին:

Քանի որ եկածը Զատիկ է, ուստի տիկինդ պէտք ունի նորածեւ հագուստի ու աչաւոս գլխարկի մը, նոյն բանը քու աղջիկներդ որոնց համար առնուազն քանի մը ամսականդ ճիւղ ընելու կը հարկադրուի:

Հապա տղաքդ, անոնց ալ անպատճառ մէյմէկ ձեռք հագուստ առնելու է պարոն թրինկէն իւրաքանչիւրը հարիւր յիսուն դրուէի փոխարէն, սակայն ամէնը՝ եթէ ասով լմնար աղէկ, կօշիկի, գուլպայի վերջապէս ոտքէն մինչեւ գլուխը տեսանելի ու անտեսանելի պէտքեր ունին: Փորձէ չի կատարել եթէ կ'ուզես լացով, կոծով ու արցունքով աղուոր Զատիկ մը անցնել:

Քանի որ եկածը Զատիկ է, պարտիս սովորական ճաշացուցակիդ վրայ աւելցնել կարգ մը աւանդական եղած տեսակներ, ինչպէս թապուռի չափ միսիան, փառաւոր ֆալխան, հաւկիթը, — թող որ այս ապրանքը հիմակուան թխածախն մէջ միշտ կը զբոսնուի այնպէս որ եթէ աշխարհիս բոլոր հաւերը խօսք մէկ ընեն ու հարիւր տարի շարունակ հաւկիթ չածեն նորէն դիւրաւ կըրնանք չափէն աւելի հաւկիթ գտնել տրամադրելի — Սիլիվրիի մածունը, Կեսարիոյ ապուխտը եւ ասոնց նման կարգ մը ծախքեր որոնք արդէն ծանօթ են ամենուն:

Քանի որ եկածը Զատիկ է եւ դուն կատարեալ քրիստոնեայ մը պարտիս եկեղեցի երթալ ու փոխանակ հաւատացեալ մը ըլլալու կատարեալ անհաւատ մը եղած տուն պիտի վերադառնաս, ինչու որ հոն պիտի նշմարես մարդիկ որոնք աղօթելէ զատ ամէն բան կ'ընեն: Քօլէժի չրջանա-

ւարտներ որոնք՝ ամենայն խայտառակութեամբ ու սրբաբարեւոյթեամբ ոտքերնին ոտքերնուն վրայ դրած պիտի նստին նոյնիսկ արարողութեանց ամենէն խորհրդաւոր վայրկեաններուն եւ այն տեսակ ձեւով մը որ թերեւս չպիտի կրնային նստիլ թատրոնի մը եւ կամ զբօսավայրի մը մէջ: Եկեղեցական էն յարձր պաշտօնեայէն մինչեւ յետինը գործի վրայ երեւնալու փափաք մը պիտի տեսնես:

Վերէն վար սեւ հագած մարդիկ՝ որոնք՝ մէյմէկ պնակ ձեռքերնին թէ դրամդ պիտի առնեն եւ թէ միեւնոյն ժամանակ քեզի պիտի ծանծրացնեն: Հոն քեզի պիտի կարդան թէ այս տարի տիկին Սողոմիկը քանի՞ հատ սպառնաչեք ու Դանիէլ աղան քանի՞ օխաիւղ նուիրեց եկեղեցիին, բաներ մը որոնք՝ պնակներէն ոչ նուազ ծանծրոյթ պիտի պատճառեն քեզ:

Քանի որ եկածը Զատիկ է տիկինդ ու աղջիկներդ ալ եկեղեցի պիտի ուզեն երթալ եթէ ոչ աղօթել, գոնէ շինած չրջապէսներն ու կապել տուած գլխարկներն ցուցադրելու եւ կամ աւելի ճիշդը վերջին նորածեւութեանց վրայ որոշ գաղափար մը առնելու:

Քանի որ եկածը Զատիկ է, փողոցէ մը անցած ատենդ բարեկամներէդ մէկը եթէ դիմացդ ելլէ փոխանակ գլխովը բարեւելու ձեռքդ պիտի սեղմէ (չեմ գիտեր թէ տոբթէօն վալանթէն նալբասի յօդուածները բնաւ օգուտ մը չունեցա՞ն):

Վերջապէս քանի որ եկածը Զատիկ է պէտք է որ անձամբ պտտըտիս բոլոր ազգականներուդ ու բարեկամներուդ օրուան տօնը աւետելու, իրք թէ անոնք չէին գիտեր:

Ենթադրենք թէ խթումին գիշերը դրացիիդ տունը գացած ես սանկ քիչ մը տեսնուելու, յաջորդ օրը կրկին պիտի երթաս գոնէ սա քանի մը բառերը «Քրիստոս յարեալ ի մեռելոցը ըսելու»:

Հաւատա որ եթէ չերթաս չափազանց

պգտիկութիւն ըրած կ'ըլլաս եւ այս բանին դրացիէդ աւելի ազնիւ տիկինդ չի հաւանիր:

Ի՞նչ անտանելի բան Աստուած իմ, ժամկոչի մը պէս տունէ պուն պըտըտել փոխարէն գաւաթ մը ֆօնեաֆի ու կտոր մը չօքօլաի եւ այս ամէնուն վրայ մտիկ ընել կամ ընել տալ — խնդիր չէ — սովորութիւն եղած կարգ մը տափակութիւններ: Քանի մը օրինակ եթէ կը հաճիք:

Օրուան տօնին համեմատ հագուող շիֆ երիտասարդ մը, ձեռքերը կրռի քեռլ կանքեր որ անպատճառ բիկմալիոնէն գնած է 27 դրուչի ֆէյքթիւր գնով մը, վարդի փայտէ բարակ գաւազան մը, լուստոնին կօշիկներ, աժուռ գուլպաներ — խեղճ աղջիկներուն անունը ելած է — որպէս զի երբեմն բանթալօնը սանկ վեր քաշած ատենը աչքի զարնէ, քովի գրպանը տուփ մը յիստուննոց պատրաստ սիկառ:

— Չա՛թ, տունէ մը ներս:

— Օ՛, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

— Հրամանեցէք, օրհնեալ է յարութիւն Քրիստոսի:

— Ի՞նչպէս էք, տունէն ի՞նչպէս են:

— Շնորհակալ եմ, հանգիստ են:

— Ի՞նչ թօհաֆ օդ մը կ'ընէ կոր:

— Այո տիկին, բաւական ցուրտ, կարծես թէ այս տարի Ծնունդը Չատիկ իսկ Չատիկն ալ ծնունդ կ'ընենք կոր:

— Հը՛, իրաւ անանկ, ուրիշ ի՞նչ կայ նայինք:

— Ինչ ըլլայ տիկին:

Ճիշդ այդ սղահուն սպասուհին — իսկ անոնք՝ որոնք՝ ոպասուհի մը ունենալու բախտը չունին, տանը աղջիկը — քեփսի մը բռնած հիւրին կը մօտենայ:

— Ա՛, շնորհակալ եմ:

— Ինչո՞ւ համար չէք առներ:

— Հաւատացէք որ տիկին այնչափ բազմաթիւ տեղեր ունիմ այցելելիք որ եթէ ամեն տեղ առնել պէտք ըլլայ ստամոքսս չափազանց անհանգիստ պիտի ըլլայ (ճը՛ռութ, ինչե՛ր ալ կ'ըսէ խուչիկը)

— Տէր ողորմեա, առէք խնդրեմ:

Մէշոսի ըսելով կը կլլէ գաւաթին մէջինը եւ չօքօլա մ'ալ ետեւէն կը զրկէ ներս ու

կամաց մը ետեւի գրպանէն ճերմակ թաշկինակ մը հանելով բերանը կը սրբէ:

Քիչ մը լուծիւն կը տիրէ սենեակին մէջ:

— Այս սօնական այցելութիւնները շատ անտանելի կը գտնեմ կոր տիկին շիտակը, բնաւ հանգիստ չունինք, մէյ մը հոս մէյ մը հոն, թափառական բան մը կ'ըլլանք կոր:

— Իրաւունք ունիք թէ եւ դժուար խնդիր է, սակայն իրար տեսնելու ալ առիթ մ'է:

Չաթ, գուռը կրկին կը զարնուի եւ մեր միւսին առիթէն օգտուելով մնաք բարովը կը կոխէ ու ինքզինքը կը նետէ տունէն դուրս:

Նոյն առթիֆօյօնն ուրիշ օրինակ մը: Առաջին երկու տողերը անփոփոխ կը մնան միշտ:

— Եկեղեցի գացի՞ք:

— Այո գացի, սակայն որչափ բազմութիւն, շիտակը անհանգիստ եղայ:

— Ես ալ ճիշդ ատոր համար չուզեցի երթալ:

— Ծանրմ պնակներն ալ անտանելի կը դառնան կոր, եթէ ամենուն տալ պէտք ըլլայ առ նուազն մարդ երկու մէ՛ծիտ աչքէն հանելու է:

— Ամեն բանին մօտան կ'անցնի կոր, սակայն ատորը երբէք:

— Էյ օդին ըսելիք չի կայ ես:

— Շատ աղուոր միայն քիչ մը հով կայ:

— Եռաճայնի մասին ի՞նչ գաղափար ունիք նայինք (Աստուած ողորմի սա Չիլինկիրեանին մեռելներուն հոգւոյն որ այս տարի խօսակցութեան նոր նիւթ մ'ալ հանեց մէջտեղ):

— Շիտակը տակաւին մտիկ չըրի, անցեալ հինգշաբթի Համբարիկ աղան երթանք ըսաւ ամա, չգացի:

— Հը՛... մեծ բան մը չէ ըստ իս: Ի՛րանը կը տրուի ու երկու վայրկեան կ'անցնի:

— Ուրիշ շատ տեղ ունի՞ք երթալիք:

— Հապա, Մագրիգիւղ պիտի երթամ տիկին (բերնի վարժութիւն, թերեւս Թօփ գափու անգամ չպիտի երթայ)

— Անշուշտ Արեւազալներուն ներկայ էիք:

— Այո տիկին, քանի մը անգամ գացի, աղջիկները շատ աղուոր կ'երգէին կոր, շիտակը կը յուսայի որ Օրիորդ Անժէլն ալ մտիկ ընելու պատիւը պիտի ունենայինք (Օրիորդը սանկ մը կը շիկնի, է՛յ խաչոր այդ վայրկեանին կ'արժէր դէմքը դիտել):

— Հա ա՛մա, հայրը չթողուց.

Քիչ մ'ալ ըլլաթիւն.

— Էյ քնաք բարով Տիկին,

— Երթաք բարով, յարգանքներս.

— Մէռսի.

— Անժէ՛լ, քառսխոսին բռնէ.

— Կ'աղաչեմ օրիորդ, անկարելի է. ըսելով ինքնիրենը կը հագնի վերարկուն եւ կը մեկնի տունէն ուրիշներու գլուխն ալ նոյն նպատակաւ արդուկելու:

Այս երկու օրինակները տալէս յետոյ կը հարցնեմ սիրելի ընթերցողներուս թէ արդեօք նկարագրածներէս տարբեր խօսակցութիւն մը տեղի ունեցա՞ւ Ձատկի այցելութեանց առթիւ: Չեմ կարծեր թէ ըսածներուս հակառակը պիտի պնդեն:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

## ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԿՍԻԹԻ. — Եկեղեցական մը անձնուիրարար ստանձներ է ամուսնացու քանտիտաներու անունները ծանուցումի ձեւով հրապարակել, մանրամասն տեղեկութիւններ ալ տալով՝ տունի, դրախտայի եւ տարիքի վրայ: Առաջին քանտիտան վաթսուներեք մըն էր:

Ծ. Խ. — Յաճախորդ ըլլայ նէ կը խոստանանք զրկել յիշեալին, պայմանաւ որ գործը եփելէն ետքը բան մը հանէ մեզ:

ՍԿԻՒՏԱՐ. — Տեղւոյս ճարպիկ քահանաներէն մէկը ժամուցները պահ մը առաջ ժողովելու աճապարանքէն Ձատկի օրը առանց փակեղի փողոց ինկած էր:

Ծ. Խ. — Պատուական տէր հա՛յր, ժամանակին ուրիշ եկեղեցական մըն ալ պոստանը մուցեր էր փակեղը, գիտե՞ս:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Հոս տեղի օրիորդները կուղեն գիտնալ թէ՛ արդեօք ո՛ւր կը ծախեն Ձատկուան հաւկիթներուն հալիս ներկը: Եթէ տեղը իմաց տրուի մեծ խնդրանք կայ:

Ծ. Խ. — Կեդրոնատեղին Պոնմարշէն է, կը գտնուի նաեւ ամէն մեծ նըպարավաճառներու քով եւ իւսկիւ տարցի տիկիներու ՊՈՒՆ մէջ:

ՂԱԼԱԹԻԱ. — Ամենափրկիչ եկեղեցիին խնամակալութիւնը հաշիւները քննած պահուն շաբաթական հասոյթի խոշոր նուազում մը նշմարեր է պնակներու բակը դրուելէն:

Ծ. Խ. — Այս ցուրտ օգերուն ով բակը՝ այագին կը կենայ տէ փարա կուտայ. պնակները ներսը ըլլան նէ ժողովուրդին գլխու ցաւ, պնակները դուրսը ըլլան նէ ժողովուրդը կողացաւ: Այս երկուքէն ո՛վ գոհացաւ:

ԳԱՏԸԳԻԻՂ. — Քէօշէյի պախալ Ազնուաշուք Տիար Քրիստոբուլաքիս Տիմիդրիքիատէսիս տեղւոյս եկեղեցիին Ձատկի առթիւ 0,15617181 օխա իւղ նուիրեց:

Ծ. Խ. — Կեցցէ մարդ, իրաւ է եղբի երբ կ'ըսեն թէ ամէն մարդ իր եղով կը տապկուի:

ԲԵՐԱ. — Այն օրիորդները որոնց օրացոյցը տօն մը ղլացած է իր սուրբերու շարքին քով, աւագ երկուշաբթի գիշեր (տօն տաան կուսանաց) սուառէ մը տուեր են խըյախ սօյէն:

Ծ. Խ. — Մեր անկեղծ շնորհաւորութիւնները, միայն թէ արդեօք իւղո՞տ պատառներ էին:

ՕՐ ՆՈՔ

ԼՈՔԵ ՆՈՔ

ՈՏԱՆԱԲՈՔ

Այս հինգշաբթի օր ի Պատրիարքարան  
 Իր կողմէ խրկեց ամեն վարժարան  
 Մէկ ֆանի տղայ, իբր շնորհաւոր  
 Չասկուան տունին Ս. Պատրիարք Հօր:  
 Այս դպրոցական փոքր հանդէսը պէ՛տ  
 Պատուասիրութեամբ շափար, զրօտ վարջ:

Թերթերը արդէն գումեցին ցաւօք  
 Թէ Վեյսէի մէջ ախտով մ'անողոք  
 Մեռեր է այրի տիկ. Նուպար փաշան:  
 Խմբագրութիւնս ալ իր ցաւակցութեան  
 Հետ մեկտեղ մաղթէ կեանք մը խիստ երկար  
 Նուպար Երամեան ընտանեաց համար:

Մանգուսէ քերթը այն անգուգական  
 Տխուր լուրի մը կ'ըլլայ մեզ գումկան,  
 Թէ ի Մուշ շաքրուս աւանդեր հոգին  
 Մշակներէն մեր գրական դաշտին  
 Եռեսնութամեայ Դաշուսէ Անդրեաս  
 Վարակուած շատնց ախտով պատուհաս:  
 Դաշուս Անդրեաս գրող, վարժապետ  
 Շատ երկար կեանք մը չունեցաւ քեպէս  
 Բայց գրագէտներու մէջը իր անուն  
 Սիրելի եղաւ գրեթէ ամենուն:

Փոխ վանահայրը մեր Ս. Արմաշի  
 Ուր անխոնջ ջանքով խեղճը յար մաշի  
 Թորգոմ ծայրագոյն վարդապետ գումշակ,  
 Ս. Պատրիարք Հօր գրելով նամակ  
 Խնդրե՛ր հեռանալ ամսուան մ'ատեն  
 Վանքէն, բժշկուիլ բո՛ւնուած ախտէն:  
 Ուսի այս մօտ կամ կուգայ մեր մօտ  
 Եւ կամ Պատրիարք առնել իր կարօտ:

Վշտով կը լսենք քե Բարբուդիսէն  
 Չամչեան յարգելի Արեւիկոկոյն,  
 Որ ժամանակէ մ'ի վեր էր տղայ,

Հակառակ բժշկաց խորհուրդին երկար  
 Եւ իրեն տարուած դարմաններուն, հոգ  
 Վիճակի մը մէջ չէ եղեր բարւոք:

Միշտ կը պատուիրուի միշտ տուի յորդոր  
 Որ երբ կուգայ Սուրբ Զատիկ փառաւոր,  
 Կարգ մը մարդիկներ, ձախլիկ, անձաւակ  
 Չպարպեն ի զուր սաւ տարձանակ:  
 Բայց հակառակ այս լուրջ պատուիրանին  
 Կանաւատեն, վնաս շատնու կեանքին:  
 Այսպէս քերթերը գրեցին երեկ  
 Թէ զոն գացեր է մարդ երկու երեք  
 Արձակուած օդին մէջ զնսկներէն:  
 Ոչ մարդիկ ոչ ալ Յիսուս կը ներեն  
 Որ ասոր անոր հաճոյքին համար  
 Մարդեր ու կեանքներ հե՛տնուին վայրապար:

Հապա ի՞նչ լսենք սա Թրանսփալի  
 Թուրք կեղծողներուն, մարդիկ ցաւալի,  
 Որոնք արժեքով մօտ քառասուն հազար  
 Կեղծեր եւ ղշեր են ծախու քազար:  
 Ինչ որ ցաւալի է մեզի համար  
 Կեղծիչին մէկն ալ հայր մըն է տաւար,  
 Որ փոխանակ հոս, երկիր քարէխնամ,  
 Աշխատելով ժիր շահելու դրամ,  
 Վաստակիլ կուգէ ճարտարով մը ծուռ,  
 Դարձնելով սակայն շատնու քախտ մուր:  
 Բայց ուսիկանութեան շնորհիւ վարպետ,  
 Չեմք կուտան օձիք աշակերտ ու պետ,  
 Ու կ'երթան փառօք դէպի միջին բանտ  
 Բարեւ յանցանքներն աններելի, անդ:

Վերջին պահուն ստալանք Տիար  
 Հրաչեայ Տէրոսկիի Գիտական փշրանք-  
 ներ յօդուածը, զոր յաջորդ թիւով  
 պիտի հրատարակենք:

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեսի, քիւ 52



# BOVININE

## ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անհալին մասերն եզան մին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ։ Պոյն նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համբաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»։ Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը։ Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով։

50—38

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԱՆԵՐՆԱՅ

Առանց, Կանանց եւ Տղայոց  
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հաւան, Թօփաշեան խան  
Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անփոփոխ աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմիղ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց քիչընկներու և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկաներու ճօխ միջերը մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է։  
Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին։ 50—32

## ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սողանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ զնասա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է։

Յիշեալ ջուրը մաշկերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոյմամբ ամէն կողմ պէտք ե-



ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ ձիւրտի վեգաի Թըպպիյէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են։

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն։

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշկերը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէսի, յիշեալ Արամ Էֆ. Սողանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մաշկընդ գունաւորման համար։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սողանճեան ստորագրութեան։

# Հ Է Ր Ճ Ա Յ Ի

## Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ չղթայներու, գրպանի պատի և քոնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, և հանի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չհաժ է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

### Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակէ է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-28

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։